ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթերթում: Պատասխանների ձևաթերթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ե՞րբ է կառավարել Ամենհոտեպ IV-ը:

1) Ք.ա. 1362-1332թթ.
2) Ք.ա. 1352-1336թթ.
3) Ք.ա. 1358-1338թթ.
4) Ք.ա. 1350-1336թթ.

2 Ե՞րբ Սոլոնը կատարեց առաջին բարեփոխումները:

1) Ք.ա. 594թ.
2) Ք.ա. 596թ.
3) Ք.ա. 595թ.
4) Ք.ա. 584թ.

3 Քանի՞ կայսր է գահակալել Բյուզանդիայում XI դարի 30-80-ական թթ.:

1) 6
2) 12
3) 10
4) 9

4 Ե՞րբ հայտարարվեց ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման մասին:

1) 1991թ. օգոստոսի 19-ին
2) 1991թ. դեկտեմբերի 8-ին
3) 1991թ. դեկտեմբերի 25-ին
4) 1991թ. դեկտեմբերի 21-ին

5 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանի 80 քաղաքներից բոլշևիկները քանիսու՞մ ուժ գործադրեցին:

1) 25
2) 15
3) 30
4) 20

6 Ե՞րբ է Վուդրո Վիլսոնը նախագահել ԱՄՆ-ում:

1) 1905-1913թթ.
2) 1901-1909թթ.
3) 1913-1921թթ.
4) 1909-1917թթ.

**7** **Ե՞րբ Մուհամեդ Ալիի զորքերը մտան Սիրիա և պարտության մատնեցին թուրքերին:**

1) 1829թ.
2) 1825թ.
3) 1831թ.
4) 1830թ.

**8** **Ո՞վ էր «նոր ազգայնականություն» բարեփոխումների նախագծի հեղինակը:**

1) Ֆ. Դելանո Ռուզվելտը
2) Վուդրո Վիլսոնը
3) Աբրահամ Լինկոլնը
4) Թեոդոր Ռուզվելտը

**9** **Քանի՞ գյուղացի մասնակցեց խաչակրաց առաջին արշավանքին:**

1) 50 հազար
2) 70 հազար
3) 40 հազար
4) 60 հազար

**10** **1916 թ. անգլիացիների օգնությամբ արաբները որտե՞ղ բարձրացրին հակաթուրքական ապստամբություն:**

1) Լիբանանում
2) Հիջազում
3) Սիրիայում
4) Մեքքայում

**11** **Ու՞մ գլխավորությամբ ազատագրվեց Իտալիայի հարավը:**

1) Էմանուել II-ի
2) Ջ. Մածինիի
3) Ք. Քավուրի
4) Ջ.Գարիբալդիի

**12** **Ո՞վ էր Գերմանիայի առաջին կանցլերը:**

1) Յ. Հերդերը
2) Հինդենբուրգը
3) Օ. Բիսմարկը
4) Ա. Հիտլերը

13 **Որտե՞ղ հռչակվեց Գերմանական կայսրությունը:**

1) Բեռլինում
2) Վերսալում
3) Ֆրանկֆուրտում
4) Համբուրգում

14 **Որքա՞ն ձեռնարկություններ և բանկեր փակվեցին «Մեծ ճգնաժամի» տարիներին:**

1) 85 հազարից ավելի
2) 75 հազարից ավելի
3) 80 հազարից ավելի
4) 90 հազարից ավելի

15 **Ինչպե՞ս էին անվանում հույները տոհմային ավագանուն:**

1) էվպատրիդ
2) արքոնտ
3) էկլեսիա
4) արեոպագոս

16 **Հին Հռոմում ինչպե՞ս էին անվանում ընտրովի գործադիր իշխանության ճյուղավորված համակարգը:**

1) մագիստրատուրա
2) կոնսուլ
3) դեկան
4) պրետոր

17 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Յակոբինյանների հեղափոխական բռնատիրությունը
բ) Նապոլեոն III-ի ավտորիտար իշխանությունը
գ) Ֆրանսիան կոնսուլության տարիներին
դ) Առաջին հանրապետությունը Ֆրանսիայում
ե) Դիրեկտորիան Ֆրանսիայում

1) դ, ա, ե, գ, բ
2) դ, ա, բ, գ, ե
3) դ, ա, բ, ե, գ
4) դ, ա, ե, բ, գ

**18** **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) «Կակաչների հեղափոխությունը» Ղրղզստանում
բ) Աբխազիայի անկախության հռչակումը
գ) «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում
դ) Բելոռուսի միանալը ՀԱՊ պայմանագրին
ե) ՀԱՊ-ի վերածվելը Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագրի կազմակերպության

1) բ, դ, ե, ա, գ
2) բ, դ, ա, ե, գ
3) բ, դ, գ, ա, ե
4) բ, դ, ե, գ, ա

**19** **Քաղաքական գործիչներին դասավորել գործունեության ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Ժակ Շիրակ
բ) Կոնրադ Ադենաուեր
գ) Հելմուտ Քոլ
դ) Սիլվիո Բերլուսկոնի
ե) Դուայտ Էյզենհաուեր

1) բ, ե, ա, գ, դ
2) բ, ե, գ, դ, ա
3) բ, ե, գ, ա, դ
4) բ, ե, դ, ա, գ

**20** **Պայմանագրերը դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա) Լոզանի
բ) Կոմպիենյան
գ) Մյունխենի
դ) Բրեստ-Լիտովսկի
ե) Վերսալի

1) դ, բ, ե, ա, գ
2) դ, բ, ա, ե, գ
3) դ, բ, գ, ե, ա
4) դ, բ, ե, գ, ա

**21** **Ե՞րբ գործողության մեջ մտավ ԱՄՆ-ի Սահմանադրությունը:**

1) 1776թ.
2) 1787թ.
3) 1791թ.
4) 1781թ.

**22** **Ե՞րբ վերացվեց Հռոմի պապի աշխարհիկ իշխանությունը:**

1) 1871թ.
2) 1881թ.
3) 1875թ.
4) 1870թ.

**23** **Ե՞րբ քրիստոնեական եկեղեցին բաժանվեց երկու մասի:**

1) 1074թ.
2) 1044թ.
3) 1054թ.
4) 1064թ.

**24** **Խորհրդային կարգերը ե՞րբ հաստատվեցին Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում:**

1) 1940թ. աշնանը
2) 1940թ. ձմռանը
3) 1940թ. ամռանը
4) 1940թ. գարնանը

**25** **Ե՞րբ ստորագրվեց Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագիրը:**

1) 2002թ. մայիսի 14-ին
2) 1992թ. մայիսի 15-ին
3) 1993թ. հունվարի 14-ին
4) 1993թ. սեպտեմբերի 15-ին

**26** **Ո՞վ էր դաշնակից զորքերի հրամանատարը Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում:**

1) Ժ. Կլեմանսոն
2) Ա. Բրուսիլովը
3) Գ. Ռենենկամպֆը
4) Ֆ. Ֆոշը

27 **Ինչպե՞ս էին անվանում Պերիկլեսի օրոք ավարտված պաշտպանական կառույցը:**

1) «Երկար պարիսպներ»
2) «Անհաղթահարելի պարիսպներ»
3) «Ամուր պարիսպներ»
4) «Հուսալի պարիսպներ»

28 **Նշվածներից ո՞ր սուլթանը նվաճեց Կոստանդնուպոլիսը:**

1) Սուլեյման I-ը
2) Բայազետը
3) Մուրադ II-ը
4) Մեհմեդ II-ը

29 **Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին որքա՞ն մարդկային կորուստներ ունեցավ ԽՍՀՄ-ը:**

1) 30 միլիոն
2) 20 միլիոն
3) 27 միլիոն
4) 25 միլիոն

30 **Հռոմի ո՞ր պապը հավատացյալներին Արևելք արշավանքի կոչ արեց:**

1) Ուրբանոս II-ը
2) Գրիգորիս VII-ը
3) Լևոն III-ը
4) Լևոն I-ը

31 **Որո՞նք էին այն պատճառները, որ Գերմանիան իր որդեգրած քաղաքականության մեջ մինչև 1939թ. չհանդիպեց լուրջ արգելքների:**

ա) Միջազգային հանրությունը պատրաստ չէր դիմելու վճռական գործողությունների:
բ) Գերմանիան կարողացել էր հիմնավորել, որ ինքը չի հզորացնում իր ռազմական ուժերը:
գ) Նրան օգնում էին ԱՄՆ-ն ու Ֆրանսիան:
դ) Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից տարվում էր Գերմանիայի խաղաղեցման քաղաքականություն:
ե) Գերմանիայից բխող վտանգը թերագնահատվում էր:

1) գ, դ, ե
2) ա, դ, ե
3) ա, դ, գ
4) ա, բ, գ

**32** **Որո՞նք էին ինվեստիտուրայի համար պայքարի պատճառները:**

ա) Գերմանական կայսրերը սկսեցին իրենց համարել Քրիստոսի փոխանորդ երկրի վրա և կառավարել նրա անունից:
բ) Հոգևորականության ներգրավումը ռազմական ծառայության մեջ:
գ) Կայսրերի և հոգևորականության միջև սկսվեց պայքար, թե բարձրաստիճան հոգևորականների պաշտոնների նշանակելու իրավունքը ում է պատկանում:
դ) Քրիստոնյա կայսրություն ստեղծելու համար գերմանական կայսրերը պետք է յուրացնեին նաև բարձրագույն հոգևոր իշխանությունը:

1) բ, դ
2) ա, դ
3) ա, գ
4) գ, դ

**33** **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Առաջին ծովային շուրջերկրյա ճանապարհորդությունը
բ) «Գերազահության մասին ակտի» ընդունումը
գ) Եվրոպացիների հասնելը Բարեհույս հրվանդան
դ) Կարլոս Խիզախի սպանությունը
ե) Նիդերլանդների անկախության ճանաչումը Իսպանիայի կողմից

1) դ, գ, բ, ա, ե
2) դ, գ, ե, բ, ա
3) դ, գ, ա, բ, ե
4) դ, գ, ա, ե, բ

**34** **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Կուբայի անկախության հռչակումը
բ) Անգլո-բուրական պատերազմը
գ) Իտալիայի կողմից Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի նվաճումը
դ) Ղրիմի պատերազմը
ե) Բալկանյան առաջին պատերազմը

1) դ, բ, գ, ա, ե
2) դ, բ, ա, գ, ե
3) դ, բ, ե, ա, գ
4) դ, բ, ա, ե, գ

35 **Քաղաքական ո՞ր գործչին է պատկանում հետևյալ արտահայտությունը:**

«Դիվանագետն այն անձն է, որ երկու անգամ կմտածի նախքան ոչինչ չասելը»:

1) Ֆ. Ռուզվելտը
2) Ու. Չերչիլը
3) Վ. Վիլսոնը
4) Նապոլեոն Բոնապարտը

36 **Ո՞ր դիվանագետի նամակից է վերցված հետևյալ հատվածը՝ ուղղված Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին:**

«... որ հայկական պետությանը այս նահանգների սահմաններում տրվի հնարավորինս լայն տարածք՝ միևնույն ժամանակ նորաստեղծ պետության համար ապահովելով համարժեք բնական սահմանի և աշխարհագրական ու տնտեսական ամբողջականության պահանջները»:

1) Ֆ. Ռուզվելտը
2) Ու.Չերչիլ
3) Վ. Վիլսոն
4) Հ. Թրումանը

37 **Կատարել համապատասխանեցում:**

1) Ի. Նյուտոն
2) Դ.Դիդրո և Ժ. դ Ալամբեր
3) Ժ. Լուի Դավիդ:
4) Կ. Մոնե

ա) «Գիտությունների արվեստների և արհեստների հանրագիտարան»:
բ) «Հորացիոսների երդումը»:
գ) «Հովանոցով կինը»:
դ) «Բնափիլիսոփայության մաթեմատիկական սկզբունքները»:

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
2) 1-դ, 2-ա, 3-գ, 4բ
3) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

38 **Կատարել համապատասխանեցում:**

1) Թերմոպիլյան կիրճ
2) Քիոս կղզի
3) Վելսինիում
4) Իսթմոս

ա) 146թ. Հռոմը օգնեց Սպարտային ընդդեմ Աքայան միության:
բ) Փիլիփոս V-ի պարտությունը Պերգամոնից, Հռոդոսից և Աթենքից:
գ) Ք.ա. 192թ. հռոմեացիները պարտության մատնեցին սելևկյաններին:
դ) Հռոմը նվաճեց Ապենինյան թերակղզու վերջին ինքնուրույն քաղաքը:

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
2) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ

39 **Որքա՞ն արծաթ և ոսկի են Ամերիկայից Իսպանիա տեղափոխել 1521-1660թթ.:**

1) 17 հազար տոննա արծաթ և 207 տոննա ոսկ
2) 18 հազար տոննա արծաթ և 200 տոննա ոսկի
3) 19 հազար տոննա արծաթ և 205 տոննա ոսկի
4) 20 հազար տոննա արծաթ և 200 տոննա ոսկի

40 **Ի՞նչ ծրագրեր ուներ Ֆրանսիան Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:**

1) Գրավել Էլզասը, Լոթարինգիան, Հռենոսի աջ ափը, Եգիպտոսը, Սիրիան, արաբական այլ հողեր, Կիլիկիան և գերմանական գաղութները:
2) Նվաճել Էլզասը, Լոթարինգիան, Հռենոսի ձախ ափը, Սիրիան, արաբական այլ հողեր, Կիլիկիան և գերմանական գաղութները:
3) Ֆրանսիան ձգտում էր Եվրոպայում հասնել գերիշխանության, Ասիայում նվաճել Սիրիան, Կիլիկիան և գերմանական գաղութները:
4) Նվաճել Անգլիայի և Գերմանիայի գաղութները:

41 **Գտնել 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունների հիմնական պատճառներից մեկը:**

1) Ռուսաստանի տնտեսական թալանը օտարերկրյա կապիտալի կողմից:
2) Պուտիլովյան բանվորների գործադուլը:
3) Հասարակության արդիականացման ցածր մակարդակը:
4) Ռուսական զորքերի պարտությունները Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաճակատներում:

42 **Ի՞նչ հետևանք ունեցավ Բեռլինի պատի կառուցումը:**

1) Բեռլինը որակվեց իբրև սառը պատերազմի մայրաքաղաք:
2) Դադարեցվեցին հարաբերությունները ԽՍՀՄ-ի և եվրոպական երկրների միջև:
3) Այն նպաստեց երկու Գերմանիաների միջև առևտրա-տնտեսական հարաբերությունների դադարեցմանը:
4) Դրանից հետո աշխարհը մտավ սառը պատերազմի ժամանակաշրջան:

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Մաաստրիխտի պայմանագրի կնքումը

բ) Եվրոպական տնտեսական համագործակցության դաշնագրի ստորագրումը

գ) ՄԱԿ-ի միջազգային դատարանի հիմնումը

դ) Շենգենյան համաձայնագիրը

ե) Պան Գի Մունի ընտրվելը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար

1) գ, բ, դ, ա, ե
2) գ, բ, ա, դ, ե
3) գ, բ, ա, ե, դ
4) գ, բ, ե, ա, դ

44 **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Իսոս

բ) Քերոնիայի

գ) Կորսիկայի

դ) Գրանիկոսի

ե) Մագնեսիայի

1) գ, ա, բ, դ, ե
2) գ, դ, ա, բ, ե
3) գ, բ, դ, ա, ե
4) գ, բ, ա, դ, ե

45 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Սիրիական պետության ստեղծումը

բ) Հանրապետության հռչակումը Թուրքիայում

գ) Անգլիացիների կողմից Մոսուլի շրջանի ռազմակալումը

դ) Փահլավիների արքայատոհմի հաստատումը Իրանում

1) գ, բ, ա, դ
2) գ, ա, բ, դ
3) գ, բ, դ, ա
4) բ, գ,ա, դ

46 **Կատարել համապատասխանեցում:**

| | |
|---|---|
| 1) Ռ. Նիքսոն | ա) 1913-1921թթ. |
| 2) Ք. Քուլիջ | բ) 1923-1929թթ. |
| 3) Վ. Վիլսոն | գ) 1969-1974թթ. |
| 4) Ֆ. Ռուզվելտ | դ) 1933-1945թթ. |

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ

**47** Ճակատամարտերը համապատասխանեցնել տարեթվերին:

1) Բեռլինի
2) Վերդենի
3) Մառնի
4) Կուրսկի
5) Մոսկվայի

ա) 1914
բ) 1916
գ) 1941
դ) 1943
ե) 1945

1) 1-ե, 2-գ, 3-բ, 4-գ, 5-դ
2) 1-ե, 2-բ, 3-դ ,4-ա, 5-գ
3) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ
4) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ, 5-գ

**48** Կատարել համապատասխանեցում:

1) Ֆ. Կուպեր
2) Հ. Բերլիոզ
3) Թ. Ժերիկո
4) Լ. Բերնինի

ա) Գեղանկարչություն
բ) Ճարտարապետություն
գ) Քանդակագործություն
դ) Երաժշտություն
ե) Գրականություն

1) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե
2) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ
4) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ

**49** Կատարել համապատասխանեցում:

1) «Կակաչների հեղափոխություն»
2) «Նարնջագույն հեղափոխություն»
3) «Սպիտակ հեղափոխություն»
4) «Վարդերի հեղափոխություն»

ա) Ուկրաինա
բ) Վրաստան
գ) Ղրղզստան
դ) Ղազախստան
ե) Իրան

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ
4) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ

50 **Ե՞րբ են խաչակիրները գրավել այս քաղաքները:**

1) Անտիոք
2) Զադար
3) Երուսաղեմ
4) Կոստանդնուպոլիս

ա) 1202թ.
բ) 1098թ.
գ) 1111թ.
դ) 1204թ.
ե) 1099թ.

1) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ
2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ
3) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ
4) 1-բ, 2-ա, 3-ե, 4-գ

## Բ մակարդակ

51 **Նշված պնդումներից ո՞րը ճիշտ չէ:**

1) Կեսարը և նրա կողմնակիցները հաճախ հաշվի չէին նստում մագիստրոսների հետ՝ երբեմն դիմելով նույնիսկ բռնի միջոցների:
2) Սուլլայի դիկտատուրան հանրապետական կարգերի ճգնաժամի երկրորդ լուրջ դրսևորումն էր:
3) Կեսարը վարում էր հավասարակշիռ քաղաքականություն՝ ձգտելով նախապատվություն չտալ ոչ պոպուլյարներին, ոչ օպտիմատներին:
4) Սուլլայի հրամանով կազմվեցին այն մարդկանց ցուցակները, ովքեր հայտարարվեցին օրենքից դուրս և ենթարկվեցին մահապատժի:

52 **Նշված պնդումներից ո՞րը ճիշտ չէ:**

1) 1931թ. Աբխազիան ընդգրկվել էր Վրաստանի կազմում, իսկ Վրաստանից իր անկախությունը հռչակեց 1991թ.:
2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր անկախությունը հռչակել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան:
3) Չճանաչված պետություններից ամենաերկարատև պատմությունն ունեն Թայվանը և բացառապես Թուրքիայի կողմից ճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը:
4) Հարավային Օսիան Վրաստանի կազմում ընդգրկվել է 1918-1920թ.թ., իր անկախությունը հռչակել 1991թ.:

53 **Պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) ԱՄՆ-ի մահմեդական սևամորթների շարժման առաջնորդը Մ. Քինգն էր:
2) 1979թ. Մեծ Բրիտանիայի պատմության մեջ առաջին անգամ վարչապետի պաշտոնը ստանձնեց կին գործիչ Մ. Թետչերը:
3) Մարշալի պլանի համաձայն ամերիկյան ֆինանսական օգնություն ստացան Եվրոպայի ավելի քան 20 երկրներ:
4) 1980թ. բռնկված Ֆոլկլենդյան պատերազմը հարմար առիթ էր Մեծ Բրիտանիայի վերածնվող ոգին ցուցադրելու համար:

| 54 | **Հասկացությունները համապատասխանեցնել բովանդակությանը:** |
|---|---|

1) Ռազմակալում
2) Ռազմատուգանք
3) Քաղաքակրթություն
4) Թեոկրատական պետություն
5) Անձնատվություն

ա) Պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարում
բ) Քաղաքական առաջնորդների և կուսակցությունների հեղինակության ու հանրահայտության ցուցանիշ
գ) Զինված ուժերի ռազմական դիմադրության դադարեցում
դ) Պատերազմում պարտված երկրի ժամանա-կավոր գրավում
ե) Հասարակության նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մակարդակ
զ) Պետություն, որտեղ քաղաքական իշխանությունը գտնվում է հոգևորականության ձեռքում

1) 1-դ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-բ
2) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-զ
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-գ
4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-գ

| 55 | **Կատարել համապատասխանեցում:** |
|---|---|

1) Պլեբեյ
2) Պրոսկրիպցիաներ
3) Դիադոխ
4) Պոպուլյարներ
5) Պրովինցիա
6) Օպտիմատ

ա) Նահանգ
բ) Ընտրյալ խավ
գ) Զորավար
դ) Ծերակույտի վերնախավի անդամ
ե) Հասարակ ժողովուրդ
զ) Ժողովրդավարական ուժեր
է) Մարդկանց սև ցուցակներ

1) 1-ե, 2-է, 3-գ, 4-զ, 5-է, 6-դ
2) 1-ե, 2-է, 3-գ, 4-զ, 5-է, 6-ա
3) 1-ե, 2-է, 3-գ, 4-զ, 5-ա, 6-դ
4) 1-ե, 2-է, 3-գ, 4-ա, 5-զ, 6-դ

| 56 | **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:** |
|---|---|

1) Կոսմոպոլիտիզմ
2) Սուվերենություն
3) Դիսիդենտ
4) Գլոբալացում
5) Աբստրակցիոնիզմ
6) Դիկտատուրա

ա) Վերացականություն
բ) Բռնապետություն
գ) Համագործակցություն
դ) Համաշխարհայնացում
ե) Ինքնիշխանություն
զ) Այլախոհ
է) Աշխարհաքաղաքացիություն

1) 1-է, 2-ե, 3-զ, 4-դ, 5-ա, 6-բ
2) 1-է, 2-ե, 3-զ, 4-ա, 5-դ, 6-դ
3) 1-է, 2-ե, 3-դ, 4-բ, 5-դ, 6-ա
4) 1-է, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ, 6-ա

**57** **Որո՞նք էին Երկրորդ համաշխարհային պատերազմի դրական հետևանքները:**

ա) Պատերազմն ապացուցեց, որ նման կարգի ռազմական բախումը սպառնալիք է մարդկության գոյությանը, նրա ստեղծած քաղաքակրթական արժեքներին:
բ) Միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման նպատակով ստեղծվեց նոր համաշխարհային կառույց՝ Միավորված ազգերի կազմակերպություն:
գ) Միլիոնավոր մարդիկ կորցրեցին հավատը քաղաքակրթության առաջադիմական ապագայի հանդեպ:
դ) Փլուզվեց համաշխարհային գաղութային համակարգը:
ե) Կապիտալիստական աշխարհի ժողովրդավարական ուժերը և ԽՍՀՄ-ը կարողացան կամք դրսևորել ու, համագործակցության լավագույն օրինակ ցուցադրելով, մեծագույն աղետից փրկել աշխարհի ժողովուրդներին:
զ) Պատերազմից հետո մի շարք երկրներ տիրացան ատոմային ռումբին:

1) բ, ե, գ, զ
2) ա, դ, ե, զ
3) ա, գ, դ, ե
4) ա, բ, դ, ե

**58** **Գտնել խաչակրաց արշավանքների հետևանքները:**

ա) Կոստանդնուպոլսի գրավումը ավելի խորացրեց բյուզանդական և հռոմեակաթոլիկական եկեղեցիների միջև գոյություն ունեցող հակասությունները:
բ) Արևելքում եվրոպացիները ծանոթացան հրացանների նոր տեսակների հետ:
գ) Աճեցին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող ապրանքափոխանակության ծավալները:
դ) Արևելքում եվրոպացիները ընդօրինակեցին ասիական ռազմարվեստը:
ե) Մուսուլմանական աշխարհում ձևավորվեց Սրբազան պատերազմի գաղափարախոսությունը:
զ) Արևելքում եվրոպացիները ծանոթացան հողագործական նոր մշակաբույսերի հետ՝ ձմերուկ, ծիրան, կիտրոն, բրինձ:

1) ա, գ, դ, ե
2) ա, գ, դ, զ
3) ա, գ, ե, զ
4) ա, գ, բ, ե

59 **Որո՞նք էին Վերսալ-վաշինգտոնյան համակարգի անկայունության պատճառները:**

ա) Դաշնակիցների կողմից հետպատերազմյան կարգավորման ընթացքում տնտեսական խնդիրների կարևորության թերագնահատումը
բ) Ամերիկայի վերականգնման տնտեսական ծրագրի բացակայությունը, որը հանգեցրեց տնտեսական ճգնաժամի
գ) Առանց տնտեսական կազդուրման պարտված երկրները անօգնական էին ներքին ծայրահեղական շարժումների դեմ պայքարում
դ) Պարտված երկրների ուսերին թողնելով հետպատերազմյան կարգավորման ողջ ծանրությունը՝ ճանապարհ էր բացվում սոցիալական ու քաղաքական ցնցումների և էթնիկական խնդիրների սրման համար
ե) Խորհրդային Միության ներկայացված չլինելը այդ խորհրդաժողովներին
զ) Եվրոպայի վերականգնման տնտեսական ծրագրի բացակայությունը

1) ա, գ, դ, բ
2) ա, գ, դ, զ
3) ա, գ, զ, դ
4) ե, ա, գ, դ

60 **Ճարտարապետական կոթողները դասավորել ըստ ժամանակագրության:**

ա) Աբու-Սիմբլի տաճարի կառուցումը
բ) Ամենամեծ թերմի կառուցումը Հռոմում
գ) Առաջին զիկուրատի կառուցումը Ուրուկ քաղաքում
դ) Պերսեպոլիսի հուշարձանախմբի կառուցումը
ե) Երկար պարիսպների կառուցումը

1) գ, ա, բ, դ, ե
2) գ, ա, դ, ե, բ
3) գ, ա, դ, բ, ե
4) գ, ա, ե, դ, բ

61 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Ա. Հիտլերը Գերմանիայի ռայխսկանցլեր
բ) Ալեքսանդրետի շրջանի ինքնավարության հաստատումը
գ) Թուրքիայի անկախության հռչակագրի ընդունումը
դ) Մուսոլինին Իտալիայի վարչապետ
ե) Ռասայական օրենքների ընդունումը Գերմանիայում
զ) Ճապոնիայի հարձակումը Մոնղոլիայի վրա
է) Գերմանիային ազատելը փոխհատուցումների պարտականությունից

1) գ, բ, դ, ե, ա, զ, է
2) գ, բ, դ, է, ա, զ, ե
3) գ, բ, դ, է, ա, ե, զ
4) գ, բ, դ, է, զ, ե, ա

62 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Օ. Բիսմարկը Պրուսիայի առաջին նախարար
բ) Տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի մասին օրենքի ընդունումը Ավստրիայում
գ) Ֆրանսիայի առաջին սահմանադրության ընդունումը
դ) Ավստրո-Հունգարիայի կազմավորումը
ե) Գերմանական կայսրության սահմանադրության հաստատումը Ռայխստագի կողմից
զ) Օ. Բիսմարկի հեռանալը իշխանությունից
է) Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի ընդունումը

1) է, գ, ա, դ, ե, զ, բ
2) է, գ, ա, դ, բ, զ, ե
3) է, գ, ա, բ, ե, զ, դ
4) է, գ, ա, դ, ե, բ, զ

63 **Ու՞մ է պատկանում հետևյալ միտքը:**

«Մենք հետ ենք մնացել առաջատար երկրներից 50-100 տարով: Մենք պետք է այդ հեռավորությունը վազելով անցնենք տասը տարում: Կամ մենք կանենք դա, կամ մեզ կճզմեն»:

1) Լ. Բրեժնևին
2) Ա. Միկոյանին
3) Ն. Խրուշչովին
4) Ի. Ստալինին

64 **Ո՞ր քաղաքական գործիչն է արտահայտել հետևյալ միտքը:**

«Մենք կառուցում ենք սեփականատերերի ժողովրդավարություն»:

1) Ռ. Ռեյգան
2) Մ. Թետչեր
3) Բ. Քլինթոն
4) Ջ. Քենեդի

65 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

1) Սուպերմատիզմ
2) Հայտեք
3) Կուբիզմ
4) Էքզիստենցիալիզմ
5) Դիրիժիզմ

ա) Արվեստի ավանգարդիստական հոսանք
բ) Փիլիսոփայական ուղղություն, որն առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո Գերմանիայում
գ) Պետության միջամտությունը տնտեսության կառավարմանը
դ) Վերացական արվեստի հոսանք
ե) Հետմոդեռնիստական հոսանք ճարտարապետության մեջ

1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-բ
2) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-գ
3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-բ
4) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ

**66** **Թվարկվածներից առանձնացնել Նոբելյան մրցանակի դափնեկիրներին:**

ա) Ա. Քամյու
բ) Բեռնարդ Շոու
գ) Մ. Շոլոխով
դ) Ռ. Ռոլան
ե) Ու. Ֆոլկներ
զ) Է. Հեմինգուեյ
է) Վ. Սարոյան

1) ա, գ, ե, զ
2) բ, դ, զ, է
3) ա, գ, ե, է
4) ա, բ, գ, է

**67** **Նշված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել Վաշինգտոնի խորհրդաժողովում:**

ա) Հեռավոր Արևելքում, Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում և Հնդկաչինում հաստատվում էր կայունություն:
բ) Սահմանափակվում էին մասնակից երկրների զինված ուժերի թվաքանակը:
գ) Հեռավոր Արևելքում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հաստատվում էր կայունություն:
դ) Վերացվում էին առանձին երկրների ազդեցության գոտիները Չինաստանում, Հնդկաչինում, Արաբական թերակղզում:
ե) Համաձայնեցվում էին հինգ առաջատար երկրների վերջրյա ծովային նավատորմների չափաքաժինները:
զ) Վերացվում էին առանձին երկրների ազդեցության գոտիները Չինաստանում:

1) ա, գ, դ
2) գ, ե, զ
3) դ, ե, զ
4) ա, գ, ե

68 **Գտնել այն երկու իրադարձությունը, որոնք խախտում են ժամանակագրական հաջորդականությունը:**

ա) Պիպին Կարճահասակի հռչակվելը թագավոր
բ) Հյուսիսարևելյան Գալիայի նվաճումը ֆրանկների կողմից
գ) Վերդենի դաշնագիրը
դ) Գերմանական թագավորության ստեղծումը
ե) Օտտոն I-ի թագադրվելը Հռոմում, որպես կայսր
զ) Լյուդովիկոս Բարեպաշտի կողմից կայսրության բաժանումը որդիների միջև

1) բ, զ
2) բ, ե
3) բ, դ
4) բ, ա

69 **Նշվածներից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել Բրեստ-Լիտովսկի պայմանագրում:**

ա) Խորհրդային իշխանությունը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսի մի մասից:
բ) Խորհրդային իշխանությունը հրաժարվում էր Ղրիմից և Սև ծովի հյուսիսային ափերից:
գ) Խորհրդային իշխանությունը պարտավորվում էր վճարել 6 միլիոն ոսկե մարկ ռազմատուգանք:
դ) Ադրբեջանին էր անցնում Լեռնային Ղարաբաղը:
ե) Գերմանիան Խորհրդային Ռուսաստանի տարածքով ազատ զորքեր տեղափոխելու իրավունք էր ստանում:
զ) Խորհրդային իշխանությունը հրաժարվում էր Ուկրաինայից, մերձբալթյան երկրներից, Արևմտյան Հայաստանից, Կարսի և Արդահանի շրջաններից:

1) ա, բ, գ
2) ա, ե, զ
3) ա, դ, զ
4) ա, գ, զ

70 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

| | |
|---|---|
| 1) Դոկտրինա | ա) Տիրույթ |
| 2) Նացիոնալիզմ | բ) Միասնացում |
| 3) Տոտալիտարիզմ | գ) Բարեփոխում |
| 4) Դոմինիոն | դ) Սկզբունք, հայեցակարգ |
| 5) Ինտեգրում | ե) Ամբողջատիրություն |
| 6) Ռեֆորմ | զ) Մենատիրություն |
| | է) Ազգայնականություն |

1) 1-դ, 2-է, 3-ե, 4-զ, 5-բ, 6-գ
2) 1-դ, 2-է, 3-ե, 4-ա, 5-զ, 6-գ
3) 1-դ, 2-է, 3-ե, 4-ա, 5-բ, 6-գ
4) 1-դ, 2-է, 3-ե, 4-ա, 5-գ, 6-բ

71 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:**

1) Արաբական պետության առաջնորդ
2) Թուրքիայի առաջնորդ
3) Բյուզանդիայի առաջնորդ
4) Ռուսաստանի առաջնորդ
5) Իրանի առաջնորդ
6) Եգիպտոսի առաջնորդ

ա) Իմամ
բ) Փարավոն
գ) Շահ
դ) Սուլթան
ե) Ցար
զ) Կայսր
է) Խալիֆ

1) 1-է, 2-դ, 3-զ, 4-ե, 5-բ, 6-գ
2) 1-է, 2-դ, 3-զ, 4-ե, 5-գ, 6-բ
3) 1-է, 2-դ, 3-զ, 4-ե, 5-ա, 6-բ
4) 1-է, 2-դ, 3-զ, 4-ե, 5-գ, 6-ա

72 **Կատարել համապատասխանեցում:**

1) Ակրոպոլիս
2) Ագորա
3) Օրդեր
4) Աքվեդուկ
5) Հեգեմոն

ա) Հենահեծ
բ) Ջրանցույց
գ) Միջնաբերդ-սրբավայր
դ) Գերիշխող ուժ
ե) Հասարակական և առևտրական կենտրոն

1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ, 5-բ
2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ
3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-բ
4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ

73 **Ի՞նչ հետևանքներ ունեցավ Երկրորդ աշխարհամարտը խաղաղ բնակչության համար:**

ա) Համակենտրոնացման ճամբարներում կոտակվեց և ոչնչացվեց:
բ) Այն նպաստեց ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:
գ) Միլիոնավոր մարդիկ կորցրեցին հավատը քաղաքակրթության առաջադիմական ապագայի հանդեպ:
դ) Պատերազմի ժամանակ կիրառվեցին գիտության նորագույն նվաճումները:
ե) Ծանր, երկարացված աշխատանքային ռեժիմ, սով, ցուրտ, սննդի պակաս:

1) ա, գ, բ
2) ա, բ, դ
3) գ, ե, դ
4) ա, գ, ե

**74** **Որո՞նք էին XX դարում մշակույթի թռիչքաձև զարգացման պատճառները:**

ա) Զանգվածային մշակույթի զարգացումը:
բ) Զարգացող և զարգացած երկրների կրթական մակարդակի բարձրացումը:
գ) Սոցիալիստական ռեալիզմի ձևավորումը:
դ) Համընդհանուր գրագիտության տարածման շնորհիվ, մշակույթը առանձին անհատների մենաշնորհից դարձավ զանգվածների սեփականություն:
ե) Տեխնածին մտածողությունը, որը ԳՏՀ-ի ժամանակաշրջանին բնորոշ երևույթ է, դարձավ գերակշռող հասարակական գիտակցության մեջ:

1) բ, դ, ե
2) ա, դ, ե
3) գ, դ, ե
4) ա, բ, գ

**75** **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի կողմից նոր աշխարհակարգի ձևավորման 14 կետերի առաջ քաշումը
բ) Իրանի ազգային բանկի կազմակերպումը
գ) Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի միջև ծովային դաշնագրի ստորագրումը
դ) Ավստրիայի նվաճումը գերմանական զորքերի կողմից
ե) Մուսոլինիի և Վատիկանի միջև պայմանագրի կնքումը
զ) Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայից
է) ԱՄՆ-ում գերշահույթների վրա դրված հարկի վերացումը
ը) Քաղաքացիական պատերազմի սկիզբը Իսպանիայում
թ) Սևրի պայմանագրի վերանայումը եվրոպական երկրների կողմից

1) ա, է, թ, բ, ե, դ, գ, ը, զ
2) ա, է, թ, բ, ե, գ, ը, դ, զ
3) ա, է, թ, բ, ե, գ, ը, զ, դ
4) ա, է, թ, բ, ե, գ, դ, ը, զ

76 **Գտնել այն երկու իրադարձությունը, որոնք խախտում են ժամանակագրական հաջորդականությունը:**

ա) Բոսնիայի և Հերցեգովինայի բռնակցումը Ավստրո-Հունգարիային
բ) Բալկանյան երկրորդ պատերազմը
գ) Առաջին աշխարհամարտի սկիզբը
դ) Ռուս-ճապոնական պատերազմը
ե) Խորհուրդների համառուսաստանյան II համագումարը
զ) Ապստամբների կողմից Պետրոգրադի գրավումը

1) ա, դ
2) ե, զ
3) բ, դ
4) դ, զ

77 **Կատարել համապատասխանեցում.**

1) Կին
2) Օսիրիս
3) Հերա
4) Իսիդա
5) Դին
6) Ահուրամազդա
7) Մարդուկ

ա) Մեռնող և հարություն առնող աստվածը եգիպտական դիցարանում
բ) Աստվածների մայրը շումերական դիցարանում
գ) Գլխավոր Աստվածը զրադաշտական դիցարանում
դ) Անձրևի, քամու և կայծակի աստվածը չինական դիցարանում
ե) Սիրո և մայրության աստվածուհին եգիպտական դիցարանում
զ) Մայրության աստվածը հունական դիցարանում
է) Աշխարհաստեղծ աստվածը շումերական դիցարանում

1) 1-բ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-դ, 6-է, 7-գ
2) 1-բ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-է, 6-գ, 7-դ
3) 1-բ, 2-ա, 3-է, 4-ե, 5-դ, 6-գ, 7-զ
4) 1-բ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-դ, 6-գ, 7-է

**78** **Կատարել համապատասխանեցում:**

1) Առաջին աշխարհամարտի ռազմաբեմերում կռվում էր
2) 1918թ. գերմանական բանակի լայնածավալ հարձակմանը մասնակցում էր
3) Իպր քաղաքի մոտ օգտագործված գազից թունավորվեց
4) 1941թ. հունիսի 22-ին ԽՍՀՄ-ի վրա հարձակմանը մասնակցում էր
5) Ստալինգրադի ճակատամարտում գերմանացիները կորցրեցին
6) Երկրորդ աշխարհամարտի տարիներին բանակ էր զորակոչվել
7) Երկրորդ աշխարհամարտի տարիներին զոհվեց

ա) 5.5 միլիոն զինվոր
բ) 110 միլիոն մարդ
գ) 70 միլիոն մարդ
դ) 330 հազար զինվոր
ե) 15 հազար զինվոր
զ) 6 միլիոն զինվոր
է) 4 միլիոն զինվոր
ը) 65 միլիոն մարդ

1) 1-գ, 2-է, 3-ե, 4-ա, 5-դ, 6-բ, 7-ը
2) 1-գ, 2-է, 3-ե, 4-ա, 5-դ, 6-ը, 7-բ
3) 1-գ, 2-է, 3-ե, 4-ա, 5-դ, 6-զ, 7-ը
4) 1-գ, 2-է, 3-ե, 4-ա, 5-դ, 6-բ, 7-զ

**79** **Կատարել համապատասխանեցում:**

| № | Իրադարձությունը | № | Տարեթիվը | № | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գերմանիայի Դաշնային Հանրապետության ստեղծումը | 1 | 1990թ. | 1 | Շ. դը Գոլ |
| 2 | Գերմանիայի միավորումը | 2 | 1995-2007թ.թ. | 2 | Կ. Ադենաուեր |
| 3 | Ալժիրի անկախության ճանաչումը | 3 | 1963թ. | 3 | Ժ. Շիրակ |
| 4 | Ֆրանսիայի վերջին դրգոլական նախագահը | 4 | 1962թ. | 4 | Հ. Քոլ |
| | | 5 | 1949թ. սեպտեմբեր | 5 | Ջ. Անդրեոտտի |

1.

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 2 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 2 | 3 |

2.

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 2 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 5 |
| 4 | 2 | 1 |

3.

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 5 |
| 2 | 4 | 4 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 2 | 1 |

4.

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 4 |
| 2 | 1 | 2 |
| 3 | 3 | 3 |
| 4 | 2 | 5 |

80 Համապատասխանեցնել իրադարձությունը, տարեթիվը, գործիչին:

| № | Իրադարձությունը | № | Տարեթիվը | № | Վայրը | № | Գործիչը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ղրիմի կոնֆերանս | 1 | 1945թ. փետրվարի 4-11-ը | 1 | Ֆուլտոն | 1 | Դ. Էյզենհաուեր |
| 2 | Սառը պատերազմ | 2 | 1941թ. հունիս | 2 | Վաշինգտոն | 2 | Ի. Ստալին |
| 3 | Երկրորդ ճակատի բացումը | 3 | 1946թ. մարտի 5 | 3 | Նորմանդիա | 3 | Ֆ. Ռուզվելտ |
| 4 | ԱՄՆ-ի կողմից Երկրորդ աշխարհամարտում ԽՍՀՄ-ին օգնության մասին հայտնելը | 4 | 1944թ. հունիսի 6 | 4 | Յալթա | 4 | Ու. Չերչիլ |

1.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 2 | 4 | 3 | 1 |
| 3 | 1 | 4 | 2 |
| 4 | 3 | 3 | 4 |

2.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 4 | 2 |
| 2 | 3 | 1 | 4 |
| 3 | 1 | 3 | 4 |
| 4 | 2 | 2 | 3 |

3.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 2 | 4 |
| 2 | 3 | 1 | 4 |
| 3 | 4 | 2 | 3 |
| 4 | 1 | 2 | 3 |

4.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 1 | 4 | 2 |
| 2 | 3 | 1 | 4 |
| 3 | 4 | 3 | 1 |
| 4 | 2 | 2 | 3 |